«ԳԱԱ-ն պետք է լուծարել»

Բանավեճ «Հայելի» ակումբում

մաղատասխան օրենսդրական դաշտ: Անկախության առաջին 10 տարում ավերվում էր գիտությունը՝ առանց օրենքների, իսկ 2000-ական թվականներին ընդունված կրթության ոլորտի օրենքները հետամնաց են»:

Ա. Դավթյանը գտնում է, որ գիտության ոլորտի զարգացման համար ստեղծված պայմանները բարվոք են. «Դրսում գիտության հարցը այլ մակարդակի վրա է դրված. համալսարանի կառուցվածքն է տարբեր, ընդհուպ՝ համալսարանի նախագահը բնակվում է համալսարանում: Նրանց ֆինանսներն ավելի մեծ են մերի համեմատությամբ: Այս պարագայում ինչ-ինչ եզրակացությունների հանգել, ցուցանիշներ որոշել ու համեմատել՝ սխալ է: Այսուամենայնիվ, դա չի նշանակում, որ մենք անելիքներ չունենք եւ չեմ կարծում, որ օրենսդրական բազա չկա: Կան բոլոր այն հիմնական օրենքները, որոնք պետք է կարգավորեն ոչ միայն կրթական, այլեւ գիտության համակարգը»:

Ա. Դավթյանը ավելացրեց, որ այժմ ԱԺ համապատասխան հանձնաժողովում է գտնվում ԳԱԱ-ի մասին օրենքը: Պատգամավորը խորհուրդ տվեց Սիներիկ Հայրապետյանին՝ օրենքի քննարկման ժամանակ առաջարկներով եւ կարծիքներով հանդես գալ: Ինքն էլ որպես հանձնաժողովի նախագահ՝ լրջությամբ կիետեւի տեսակետներին:

Ս. Հայրապետյանը Ա. Դավթյանին դիտողություն արեց, որ նա լավ չի պատկերացնում ոլորտի իրավիճակը. «Օրինակ՝ ասացեք, ի՞նչ նպատակ ունի այս որոշումը ակադեմիկոսների հսկա ինստիտուտը, որը գիտության հետ ոչ մի առնչություն չունի: Փորձե՞լ եք ուսումնասիրել, թե վերջին 5 տարում Հայաստանը միջազգային ասպարեզում ո՞ւմ կողմից է ներկայացվում՝ ակադեմիկոսների՞, թե՞ ոչ ակադեմիկոսների, որոնք 57-60000 դրամ են ստանում: Ունենք շատ գիտնականներ, որոնք թողել ու գնացել են այս երկրից: Նախ պետք է պետականորեն որոշվի՝ գիտության, աշխատողի եւ գիտական հիմնարկի ակտիվությունն ի՞նչ սանդղակի վրա է: Ներկայիս գիտությունների ակադեմիան պետք է լուծարել եւ նրա տեղը նորը ստեղծել՝ նոր մոտեցումներով: ԳԱԱ-ն դարձել է չինովնիկների հավաքատեղի՝ ամեն չինովնիկ մտածում է՝ ախ, ինչ լավ կլինի, եթե դառնամ ակադեմիկոս ու ձրի փողեր ստանամ մինչեւ կյանքիս վերջը»:

ԼՈՒՍԻՆԵ ՇԱՀԲԱՁՅԱՆ